

ՍԱՂՄՈՍ 105

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՉ հրաշալի գործը հանուն Իսրայելի	ՏԻՐՈՉ հավիտենական հավատարմությունը	Իր ժողովրդի համար Աստծո մեծ գործերի պատմությունը	Աստված և Նրա ժողովուրդը	Իսրայելի հրաշալի պատմությունը
<u>MT ներածություն</u> <u>Տկա</u>				
105:1-7	105:1-6	105:1-6	105:1-6	105:1-3 105:4-5 105:6-7
105:8-15	105:7-12	105:7-11	105:7-11	105:8-9 105:10-11 105:12-13
105:16-24	105:16-22	105:16-22	105:16-22	105:14-15 105:16-17 105:18-19 105:20-21 105:22-23
105:25-36	105:23-25	105:23-25	105:23-25	105:24-25 105:26-27 105:28-29 105:30-31 105:32-33 105:34-35
105:37-45	105:37-41	105:37-42	105:37-42	105:36-37 105:38-39

		105:40-41
105:42-45		105:42-43
	105:43-45	105:43-45բ
		105:44-45
		105:45գ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրույթը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 105 և Սաղմոս 106-ը միասին ձևավորում են աստվածաբանական մի բաժին:

Պարզապես հավելյալ տեղեկություն. արդի Աստվածաշնչյան մեկնաբանները իրականում չգիտեն ինչու, ինչպես կամ երբ են խմբագրվել սաղմոսները և ում կողմից: Սա ճիշտ է ամբողջ Եբրայերեն Աստվածաշնչի համար: Ընթացքը անհայտ ու կորած է մեր համար: Ուստի, պետք է ընդունել, որ շատ կանխատեսադրություններ և ենթադրություններ են կանոնականացման արդի տեսություններին հանգեցրել: Ես վստահն և կատարելապես հաստատում եմ Սուրբ Գրքի ներշնչանքը (տես հինգ տեսանյութերը, որոնք ներբեռնված են www.freebiblecommentary.org, առաջին պարբերությունը), սակայն նաև ընդունում եմ հրեաների կողմից իրենց կանոնի և վաղ եկեղեցու որոշումների հասկացողությունը, թե որ գիրքը պետք էր ընդգրկել Սուրբ Գրքի մեջ:

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ և Աստվածաշնչի Մեկնության Սեմինարի Չեռնարկ, «Աստվածաշունչը, I. «Կանոն», էջ՝ 19, առցանց՝ www.freebiblecommentary.org

Բ. Սաղմոս 105 նկարագրում է Աստծո սիրո և շնորհքի գործերը ուխտի ժողովրդի կյանքում:

1. Նահապետների սկզբնական կանչը, Սաղմ. 105:1-7
2. Նահապետների ճամփորդությունը դեպի Քանան, Սաղմ. 105:8-15
3. Նահապետը (Հակոբը) Եգիպտոսում, Սաղմ. 105:16-24
4. Իսրայելի Եգիպտոսից, Սաղմ. 105:25-36
5. Իսրայելը դեպի Քանան, Սաղմ. 105:37-45

Գ. Սաղմոս 106 նկարագրում է Իսրայելի ըմբոստ պատասխանի խայտառակությունը:

Դ. Այս Սաղմոսի և 1 Մնացորդաց 16:7-46-ի միջև շատ նմանություններ կան:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 105:1-7

¹Գոհությո՛ւն մատուցեցեք ՏԻՐՈՉԸ,
Նրա անո՛ւնը կանչեցեք,
Նրա գործերը հայտնի դարձրե՛ք ժողովուրդների մեջ:
²Երգեցե՛ք Նրան, սաղմո՛ս ասեք Նրան,
Պատմեցե՛ք Նրա բոլոր հրաշալի գործերը:
³Նրա սուրբ անվամբ պարծեցե՛ք:
Թող հրճվի ՏԻՐՈՉԸ փնտրողների սիրտը:
⁴Փնտրեցե՛ք ՏԻՐՈՉՆ ու Նրա գործությունը,
Նրա երեսը փնտրեցե՛ք ամեն ժամանակ:
⁵Հիշեցե՛ք Նրա արած զարմանալի գործերը,
Նրա հրաշալիքներն ու Նրա բերանի դատաստանները:
⁶Ո՛վ Նրա ծառայի՝ Աբրահամի սերունդ,
Դո՛ւք, Հակոբի որդիներ՝ Նրա ընտրյալներ,
⁷ՏԵՐՆ Ինքն է մեր Աստվածը,
Նրա դատաստաններն ամբողջ երկրի մեջ են:

105:1-7 Այս Սաղմոսը և այս պարբերությունը ընդգծում են ՅԱՀՎԵԻ կողմից Աբրահամին և իր սերունդներին ուղղված հատուկ կանչը: ՅԱՀՎԵՆ գործեց հզոր, նպատակային ճանապարհներով, որպեսզի իրականացնի Իր հայտնությունը այս մի ընտանիքի միջոցով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՏՐՎԱԾ ՈՒՍՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ):

Այս Սաղմոս կիրառում է մի քանի տերմինները, որոնք նկարագրում են այս գործերը:

1. Նրա գործերը, Սաղմ. 105:1 – BDB 760, տես՝ 1 Մնաց. 16:8, Սաղմ. 9:11, 66:5, 77:13, 78:11, 103:7, Եսայի 12:4
2. Նրա բոլոր հրաշալի գործերը, Սաղմ. 105:2 – BDB 810, տես՝ Ելից 3:20, 34:20, 34:10, Հեսու 3:5, Դատ. 6:13, 1 Մնաց. 16:9,24, Հոբ 37:5,14, Սաղմ. 9:1, 26:7, 78:11, 139:14, Երեմ. 21:2, Միքիա 7:15, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԱՇԱԼԻ ԲԱՆԵՐ
3. Նրա զարմանալի գործերը, Սաղմ. 105:5 – BDB 810, տես՝ Հատուկ Թեմա #2-ում:
4. Նրա հրաշալիքները, Սաղմ. 105:5 – BDB 1048, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ
5. Նրա դատաստանները, Սաղմ. 105:7 – BDB 1048
6. հրաշքներ, Սաղմ. 105:17 – BDB 68

Իսրայելի պատմության տարբեր ժամանակաշրջաններ ցույց են տալիս ՅԱՀՎԵԻ հատուկ գործերը հանուն Աբրահամի ընտանիքի: Աստվածային այս գործերի նպատակն էր օգնել, որ ազգերը ճանաչեն ՅԱՀՎԵԻՆ, տես՝ 3 Թագ. 8:42-43, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

Սաղմոս 105:1-5 ունի մի շարք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, որոնք նկարագրում են տանարում երկրպագությունը:

1. գոհությո՛ւն մատուցեցեք – BDB 392, KB 389, *Hiphil*, տես՝ 1 Մնաց. 16:8,34, Եսայի 12:4
2. կանչեցե՛ք – BDB 894, KB 1128, *Qal*, տես՝ Սաղմ. 99:6
3. հայտնի դարձրե՛ք – BDB 393, KB 390, *Hiphil*, տես՝ Սաղմ. 145:12
4. երգեցե՛ք – BDB 1010, KB 1479, *Qal*
5. սաղմոս երգեցե՛ք – BDB 247, KB 273, *Piel*, տես՝ Սաղմ. 66:2, 68:4, 135:3
6. խոսե՛ք, պատմե՛ք – BDB 967, KB 1319, *Qal*, տես՝ 77:12, 119:27, 145:5, 147:1
7. պարծեցե՛ք – BDB 237, KB 248, *Hithpaal*
8. փնտրեցե՛ք – BDB 205, KB 233, տես՝ Ելից 33:7, 2 Օրինաց 4:29, 1 Մնաց. 16:10, 2 Մնաց. 11:10-11, Եսայի 51:1, Երեմ. 50:4, Ովսեա 3:5, 5:6

9. փնտրեցե՛ք – BDB 134, KB 152, *Piel*, տես՝ 1 Մնաց. 16:11, 2 Մնաց. 7:14, Սաղմ. 27:8, Ամովս 4:5
 10. հիշեցե՛ք – BDB 269, KB 269, *Qal* տես՝ 1 Մնաց. 16:12

105:1 «ՏԵՐԸ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ «**կանչեցե՛ք Նրա անունը**» Սաղմոս 105:1-4 նկարագրում է ծիսական (կրոնական ընթացակարգ) երկրպագություն: «Անունը» ներկայացնում է անձի բնավորությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՉԵՑԵՔ ՆՐԱ ԱՆՈՒՆԸ

❖ «**Նրա գործերը հայտնի դարձրե՛ք ժողովուրդների մեջ**» Աստծո կամքն է, որ ամբողջ երկիրը (տես՝ Սաղմ. 105:7բ) ճանաչի Իրեն (տես՝ Սաղմ. 145:12, Եսայի 12:4-5): Իսրայելի այս իրականացնելու միջոց է և Աստվածաշունչը այս հայտնության արձանագրությունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

105:2 «Երգեցե՛ք Նրան» Սա (BDB 967, KB 1319) նույնպես նկարագրում է ծիսական պաշտամունք: Նրանք երգում էին երգեր ՅԱՀՎԵԻ և Նրա փրկագործությունների մասին, հետադարձ հայացք գցելով մինչև իսկ Ելից (տես՝ Ելից 15):

❖ «**Պատմեցե՛ք**» Սա բառացի «մտածե՛ք» կամ «խորհե՛ք»: Մենք պետք է պահենք Աստծո բնավորությունը և գործերը մեր աչքերի առաջ (տես՝ Սաղմ. 105:5, 2 Օրինաց 6:6-9):

105:3 «Փառաբանեցե՛ք» Այս ԲԱՅԸ նշանակում է «պարծենալ» (BDB 237, KB 248, *Hithpael* ՀՐԱ-ՄԱՅԱԿԱՆ): Իսրայելը պետք է «պարծենա» Աստծո տեսակով, ով կանչել է նրանց և բացառապես իրենց Աստվածն է:

❖ «**Թող հրճվի ՏԻՐՈՋԸ փնտրողների սիրտը**» «Սիրտը» խոսում է ամբողջ անձի մասին: Մենք պետք է պատասխանենք (ԲԱՅԸ *Qal* ԱՆԿԱՏԱՐ է, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) Աստծո նախաձեռնությանը, և պատշաճ՝ ճիշտ կերպը «ուրախությունն» է (BDB 970):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ

105:4

NASB, NKJV, NRSV, NJB	« և Նրա գործությունը »
TEV	« օգնության համար »
LXX, Moffatt	« և զորացե՛ք »
JPSOA	« Նրա ուժը » (վերաբերում է Տապանակին, տես՝ Սաղմ. 78:61, 132:8)
Peshitta, REB	« ուժեղացե՛ք »
NAB	« ապավինե՛ք »
NET Աստվածաշունչ	« և այն գործությունը, որ նա է տալիս »

Ինչպես որ ակնհայտ է թարգմանությունների բազմազանությունից, այս արտահայտությունը անորոշ է: Կարծում եմ տանարի պաշտամունքի համատեքստից (այսինքն՝ Սաղմ. 105:1-4), որ JPSOA տարբերակը լավագույնն է (այսինքն՝ Տապանակը, տես՝ Սաղմ. 78:31, 132:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ

❖ «**Նրա երեսը փնտրեցե՛ք ամեն ժամանակ**» Սա հավատարիմ հետևորդներին դարձվածքով կոչ անելու կերպ է ՅԱՀՎԵԻՆ և Նրա հայտնությունն իրենց մտքերում պահելու համար (տես՝ 2 Օրինաց 6:6-9):

Սա նման է Պողոսի կողմից անդադար աղոթելու շեշտադրված կոչին (տես՝ Եփես. 6:18, 1 Թեսաղ. 5:16-18):

105:5 «ու Նրա բերանի դատաստանները» Սա արտացոլում է երբայերեն խոսված խոսքի գորույթյան հասկացությունը (տես՝ Ծննդ. 1:1, Եսայի 55:1, Հովհաննես 1:1, և նկատե՛ք Ծննդ. 1:3):

«Դատաստանների» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ:

105:6 Այս համարն արտացոլում է Աստծո կողմից Աբրահամի (Սաղմ. 105:6ա) և նրա ժառանգների ընտրությունը (105:6բ) որպես ամբողջ մարդկությանը փրկելու Նրա ընտրյալ միջոցները, Ծննդ. 3:15:

Հիշե՛ք, ՀԿ-ում «ընտրյալ» (BDB 104, 1 Մնաց. 16:13) տերմինը կիրառվում է գործիքակազմի (այսինքն՝ ծառայության) համար, ոչ թե փրկության (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱ ԸՆՏՐԵՑ ՄԵՉ): Աստված ընտրում է օգտագործել ազգերը, ժողովուրդները և պատմական դեպքերը Իր ընդարձակ փրկագործության ծրագրում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

105:7 «ՏԵՐՆ Ինքն է մեր Աստվածը» Այս արտահայտությունը հնարավոր է անդրադառնում է Ելից 20:2-ի ուխտի լեզվին: Այն ներառում է երկու ամենատարածված անուններն Աստծո համար՝ ՅԱՀՎԵ – ՏԵՐ և *Էլոհիմ* – Աստված: Արդի արևմտյան գիտությունը հաստատել է, որ սրանք ներկայացնում են Աստծո անունը, որոնք կիրառվում են ՀԿ-ի երկու տարբեր մարդկային հեղինակների կողմից: Հրեաները պնդում են, որ դրանք ներկայացնում են միակ ճշմարիտ Աստծո հատկանիշները (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

1. *Էլոհիմը* Աստծո անունն է որպես ամբողջ կյանքի արարիչ, ապահովող, և պահապան:
2. *ՅԱՀՎԵՆ* Աստծո ուխտի անունն է, որպես փրկիչ և ազատող:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ, Դ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՆԳԱՄԱՏՅԱՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

❖ «**Նրա դատաստաններն ամբողջ երկրի մեջ են**» Սա նկատի ունի Աստծո տիեզերական՝ համընդհանուր փրկ կենտրոնացումը, որը Սաղմոսների այս բաժնում շատ է գերիշխում (այսինքն՝ Սաղմոս 96-ի գրառումները):

«Երկիր» տերմինը կարող է թարգմանվել մի քանի կերպ՝ կախված համատեքստից: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՄԵՐ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 105:8-15

⁸Նա իր ուխտը հավիտյան հիշում է, այն խոսքը,

Որ հրամայեց՝ մինչև հազար սերունդ:

⁹Այն ուխտը, որ արեց Աբրահամի հետ

Ու այն բերանը, որ Իսահակին տվեց .

¹⁰Եվ նույնը հաստատեց Հակոբի համար, որ դա օրենք,

Իսրայելի համար հավիտենական ուխտ լինի՝

¹¹Ասելով. «Քեզ եմ տալու Քանանի երկիրը,

Ձեր ժառանգության վիճակը»:

¹²Երբ նրանք հազիվ մի քանի հոգի էին,

Իրոք սակավաթիվ ու օտար՝ նրա մեջ:

¹³Երբ մի ազգից ուրիշ ազգի,

Մի թագավորությունից ուրիշ ժողովրդի մեջ էին դեգերում:

¹⁴Նա որևէ մեկին թույլ չտվեց, որ նրանց նեղի,

Նույնիսկ թագավորները հանդիմանեց նրանց պատճառով:

¹⁵ «Իմ օծյալներին մի՛ դիպչեք

Ու իմ մարգարեներին վնաս մի՛ հասցրեք»:

105:8-15 Այս պարբերությունը ակնարկում է ՅԱՀՎԵԻ կողմից Աբրահամի կանչին, որպեսզի թողնի Ուրը և հետևի Իրեն խոստումի նոր երկիրը գնալու համար (տես՝ Ծննդոց 12-18): Այս նույն խոստումը վերահաստատվեց Հակոբին՝ Իսրայելին (տես՝ Ծննդ. 28:13-15):

ՅԱՀՎԵՆ պաշտպանեց և ապահովեց Աբրահամին սերունդներին, երբ նրանք պանդխտություն էին անում Քանանում (այսինքն՝ Ծննդ. 12:7, 20:1-7, 35:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ՆԱՀՎԵՏՆԵՐԻՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ՆԱՀՎԵՏՆԵՐԻՆ

105:8 «Նա իր ուխտը հավիտյան հիշում է» Աստծո գրեթե բոլոր խոստումները պայմանավորված են մարդու արձագանքով: Ուստի «հավիտյան» խոսքը պետք է թարգմանվի պայմանական, անպայմանական ուխտի համատեքստում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (o'lam)):

Սուրբգրային հայտնության կիզակետն այն է, որ Աստված հավատարիմ է անգամ այն դեպքում, երբ մարդկությունը հավատարիմ չէ (համեմատե՛ք՝ Սաղմոս 105-ը Սաղմոս 106-ի հետ): Ընկած մարդկության հույսը իր կարողության վրա չէ, թե կարող է մի քան անել, չնայած որ անհրաժեշտ է շարունակական զոջման հավատքի պատասխան: Անփոփոխ Աստծո բնավորությունն է, որ ապահովում է հույս և ապահովություն (տես՝ Սաղմ. 102:27, Սաղ. 3:6, Հակ. 1:17):

«Ուխտի» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ:

❖ «մինչև հազար սերունդ» Սա դարձվածք է Աստծո հավատարմության համար: Սա գուգահեռ է Սաղմ. 105:8ա-ում «հավիտյան» բառին: Այն կիրառվում է որպես Աստծո սիրո և արդարության միջև հակադրություն 2 Օրինաց 5:9 և 7:9-ում:

«Հազարը» սիմվոլիկ թիվ է, որը մի քանի իմաստով է կիրառվում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՉԱՐ (eleph)

105:9-10 ՅԱՀՎԵՆ կրկնեց Իր առաջին խոստումը, որ տվել էր Աբրամին, մյուս Նահապետներին:

1. Աբրահամին – Ծննդ. 12:7, 13:15, 15:18
2. Իսահակին – Ծննդ. 26:3-4
3. Հակոբին՝ Իսրայելին – Ծննդ. 28:13

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀՎԵՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

105:10բ «հավիտենական ուխտ» Այս արտահայտությունը ոմանց համար պատճառ է դարձել՝

1. որ անտեսեն Մովսիսական Ուխտի գործերի հիման վրա (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ) և շնորհի հիման վրա ուխտի միջև տարբերությունները (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36):
2. Հիսուսի և ՆԿ-ի առաջնահերթությունը ՀՎ-ի ազգային խոստումներից առավել
3. Եբրայերենի *o'lam* բառի իմաստային բազմազանությունը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (o'lam)
4. ՅԱՀՎԵԻ խոստումները մարդկության փրկելու անպայմանական են (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

5. Այս հասկացությանը վերաբերող սուրբգրային ակնարկները՝
 - ա. Նոյի հետ, որ այլևս ջրհեղեղ չի լինելու – Ծննդ. 9:12-13
 - բ. Աբրահամի և նրա սերմի հետ – Ծննդ. 17:7,13,19, 1 Մնաց. 16:15-17, Սաղմ. 105:9,10
 - գ. կապված շաբաթ օրվա պաշտամունքի հետ – Ելից 31:16
 - դ. կապված Ղևտական քահանաների հետ – Թվոց 18:19
 - ե. Իսրայելի հետ՝
 - 1) անպայմանական՝ անվերապահ – տես՝ #2, ինչպես նաև Եզեկ. 16:60-62, 37:24-28, Սաղմ. 105:5,9
 - 2) պայմանական – Եսայի 24:5, 33:8, ինչպես նաև՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30
 - զ. Դավթի և իր արքայական սերունդների հետ – 2 Թագ. 7:13-16, Եսայի 55:3-5, 61:4-9, գուգահեռ 1 Մնացորդաց 17-ին
 - է. Նոր Ուխտի հետ – Երեմ. 31:31-34, 32:40, 50:5, Եզեկ. 36:22-36 (այսինքն՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը, Եբր. 13:20):

105:11 Սա ակնարկ է Ծննդ. 12:1, 13:15, 15:18-ին:

❖ **«ձեր ժառանգության վիճակը»** Տես առցանց Սաղմ. 78:55-ի ամբողջական գրառումը:

105:12 Մի քանի տեքստեր կան, որտեղ նշվում են Աբրահամի ընտանիքի չափը:

1. մեկ օր շատ է մեծանալու՝ Նահապետները, Ծննդ. 12:2, 16:10, 17:4-5, 18:18, 34:30, 2 Օրինաց 26:5
2. կիրառված նկարագրություններ՝
 - ա. «երկրի փոշու չափ» - Ծննդ. 13:16, 28:14, Թվոց 23:10
 - բ. «երկնքի աստղերի չափ» - Ծննդ. 15:5, 26:4, 2 Օրինաց 10:22, 28:62
 - գ. «ծովի ավազի չափ» - Ծննդ. 22:17, 32:12
3. անգամ Իսմայելի սերունդն է լինելու բազմաթիվ – Ծննդ. 16:10, 17:20
4. ընտանիքը սկսեց փոքրից
 - ա. ՅԱՀՎԵԻ սկզբնական ընտրությունը որպես Իր ժողովուրդը – 2 Օրինաց 7:7
 - բ. սկզբնական թիվը Եգիպտոսում – Ծննդ. 46:26-27, 2 Օրինաց 26:5
 - գ. սկզբնական թիվը Քանանը նվաճելիս – 1 Մնաց. 16:18-19
5. փոքր էր ուխտի անհնազանդության և գերության տարվելու պատճառով – 2 Օրինաց 4:27, 28:62

Հիշե՛ք, որ Աստծո կամքը մարդկության համար նրանց բազմանալն ու շատանալն էր և երկիրը լցնելը – Ծննդ. 1:28, 9:1,7, Սաղմ. 127:5: Նա ուզում է, որ այն լցվի մարդկանցով, ովքեր ճանաչում են Իրեն և հնազանդվում: Ուշադրություն դարձրե՛ք դարձյալ Ծննդոց 3 և 6-ի ողբերգությունը:

105:15 «Իմ օծյալներին...Իմ մարգարեներին» Մրանք համազոր հարաբերություններ են և, հետևաբար, վերաբերում են Նահապետներին (տես՝ Ծննդ. 20:7):

Այս տերմինը՝ «օծյալները» (BDB 603) հանդիսանում է Մեսիա բառի արմատը: Այն նկատի ունի Նահապետներին կամ այն ընտանիքին, որ Աստված ընտրեց և սպառազինեց կատարելու Իր կամքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ, Զ.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ (ՀԿ), Ա. #2

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 105:16-24

¹⁶Համենայն դեպս, սով բերեց երկրի վրա,
Կոտրեց հացի ամբողջ գործությունը:
¹⁷Նրանց առջևից մարդ ուղարկեց՝ Հովսեփին,
Որ ծառայության ծախվեց:
¹⁸Նրա ոտքերը կապանքներով ցավեցրին,
Նա երկաթի մեջ դրվեց՝
¹⁹Մինչև այնքան ժամանակ,
Երբ Նրա խոսքը եկավ, ՏԻՐՈՋ խոսքը փորձեց նրան:
²⁰Թագավորն ուղարկեց ու արձակեց նրան,
Ժողովուրդների վրա տիրողն ազատեց նրան:
²¹Իր տան վրա տեր դարձրեց նրան
Եվ իր ամբողջ ունեցվածքի վրա՝ իշխան .
²²Որպեսզի նրա իշխաններին իր կամքի համաձայն կապի
Ու նրա երեցներին իմաստություն ուսուցանի:
²³Իսրայելն էլ եկավ Եգիպտոս,
Ու Հակոբը պանդուխտ դարձավ Քամի երկրում:
²⁴Նա Իր ժողովրդին խիստ բազմացրեց
Ու նրանց իրենց թշնամիներից ավելի գորավոր դարձրեց:

105:16-24 Այս պարբերությունը գործ ունի ՅԱՀՎԵԻ Իր ժողովրդին Եգիպտոսից դեպի Քանան առաջնորդելու հետ (տես՝ Ծննդոց 37-50): Սա էր Աստծո ծրագիրը՝

1. բարձրացնել Հովսեփին որպես առաջնորդ՝ պատրաստության համար, Սաղմ. 105:17
2. սովի միջոցով հարկադրել տեղափոխություն, Սաղմ. 105:16
3. հրահրել հետագայում բախում եգիպտացիների և իսրայելացիների միջև, որպեսզի ցույց տա Իր գործությունը եգիպտական աստվածների վրա և հայտնի Իրեն եգիպտացիներին և շրջապատող ՀՄԱ-ի ազգերին, Սաղմ. 105:25

Սաղմ. 105:12-ի «փոքրաթիվ» բառը հակադրված է Սաղմ. 105:24-ի հետ: Տես ամբողջական գրառումը 105:12-ում:

105:16 «Նա բերեց. . Նա կոտրեց» Աստված գործածում է աղետները Իր նպատակների համար՝ Եսայի 45:7: Թվում է թե սա հակասում է Սաղմ. 105:14-15-ին, սակայն Աստված օգտագործում է թե՛ դրական և թե՛ բացասական դեպքերը: Սա ակնհայտ է Իսրայելի հետ Իր ուխտի փոխհարաբերության մեջ (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-29, Սաղմոս 1): Տես Եսայի 45:7-ի առջանց ամբողջական գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵԿ ՊԱՏՃԱՌ

❖ **«հացի ամբողջ գործությունը»** Այս դարձվածքը ՀԿ-ում մի քանի անգամ կիրառվում է (տես՝ Ղևտ.26:26, Եզեկ.4:16, 5:16, 14:13): Աստված է վերահսկում անձրևն ու կերակուրը: Նա ուզում է օրհնել, սակայն մեղքը և ապստամբությունը պատճառ են դառնում ետ պահելու կյանքի համար անհրաժեշտությունները (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Սաղմոս 105-ում սովը պետք է ի կատար ածեր աստվածային ծրագիրը (այսինքն՝ Հովսեփը Եգիպտոսում դրվեր որպես առաջնորդ և Իսրայելը գնար այնտեղ բնակություն հաստատելու):

«Գավազան» /անգլ./ (BDB 641, KB 573) կարող է նկատի ունենալ՝

1. հացահատկի ցողունը
2. փայտից գավազան, որի վրայից կախված տարվում էր սնունդ
3. փայտից գավազան, որից կախում էին սնունդը, որպեսզի կենդանիները չկարողանան ուտել

4. Հնագույն Մերձավոր Արևելքում կյանքի համար հացի միանշանակ անհրաժեշտությունը նկատի ունեցող սիմվոլիկ կերպ:

105:17 «նրանց առջևից մարդ ուղարկեց» Սա նկատի ունի Հովսեփին, որպես Հակոբի ընտրյալ ընտանիքը փրկելու և պահպանելու Աստծո միջոցը (տես՝ Ծննդոց 37, 39-46): Հովսեփի սեփական զգայունությունը ՅԱՀՎԵԻ գործողությունների հանդեպ արտահայտվում է Ծննդ. 45:4-8, 50:20-ում: Հավատքի աչքերը պատմությունը հստակ են տեսնում:

105:18 «Նա ինքը» «Ինքը» բառը բառացի նշանակում է «շունչ՝ հոգի», *nephesh* (BDB 659), որն ունի մեծ ստուգաբանական դաշտ, սակայն սովորաբար արտահայտում է թթվածին շնչող կյանքն այս մոլորակի վրա (այսինքն՝ մարդիկ և կենդանիները, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ . NEPHESH):

Անգլերեն արդի թարգմանություններից շատերը ենթադրում են, որ *nephesh* բառի բաղաձայններ այս համատեքստում արտացոլում են աքքադերեն «կոկորդ» կամ «վիզ» բառերի համար արմատը (տես՝ NRSV, TEV, NJB, JPSOA, REB): Երկայթը բանտարկությունը նկատի ունենալու կերպ էր (տես՝ Սաղմ. 107:10):

❖ **«նա երկայթի մեջ դրվեց»** Սա արտացոլում է Հովսեփի ցավոտ փորձառությունը՝ իր եղբայրների կողմից ծախվելու, չնայած որ հետագայում ճանաչեց Աստծո ձեռքը (տես՝ Ծննդոց 37, 45:4-8):

MT բառացի ներկայացնում է «երկայթը մտավ (իր) հոգու մեջ»:

Սակայն LXX-ն այս արտահայտությունը թարգմանել է որպես «նրա հոգին անցավ երկայթի միջով»: Հովսեփի իր եղբայրների կողմից մերժված լինելու կյանքի փորձառությունները և եզիպտական բանտում դաժան վերաբերմունքը ցավոտ էր և սպիներ էր թողել: Սակայն դրանք նաև տվեցին ուժեղ, հավատարիմ հետևորդ (տես՝ Եբր. 5:8):

105:19ա «Մինչև այնքան ժամանակ, երբ Նրա խոսքը եկավ» Սա հավանաբար նկատի ունի Հովսեփի կանխատեսումները Փարավոնի հացթուխի և մատովակի մասին, որոնց հետ նա բանտարկված էր (տես՝ Ծննդոց 40):

Սակայն ոմանք սա դիտարկում են որպես Փարավոնի երագները Հովսեփի կողմից մեկնաբանելը (տես՝ Ծննդոց 41):

105:19բ

NASB, NKJV, REB, NRSV

TEV, NJB, NET

LXX

Peshitta

JPSOA

«փորձվեց»

«ապացուցեց»

«մաքրվեց»

«ստուգվեց»

«արդարացվեց»

MT տալիս է «փորձվեց» կամ «մաքրվեց» (BDB 864, KB 1057, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ԲԱՅԸ: Պոեմի այս տողը պետք է, որ առնչվի հ.19ա-ի հետ, որը նկատի ունի Հովսեփի երագների կանխատեսումները: ՅԱՀՎԵՆ չէր փորձում Հովսեփին, այլ ապացուցում էր, որ Ինքն է Հովսեփին հայտնում ապագայի դեպքերը:

105:20 «թագավորը» Գիտական շատ տարածայնություններ կան Եզիպտոսում Իսրայելի պանդիստության և Ելիցի տարեթվերի շուրջ: Ժամանակակից գիտնականները վստահ չեն՝

1. Ելիցի տարեթվերի հարցում
2. Ելիցում ներգրավված իսրայելացիների թվաքանակի հարցում
3. Ելիցի Փարավոնի հարցում
4. Ելիցի երթուղու հարցում

ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ . ԵԼԻՑԸ (անորոշությունները)

105:22ա

NASB	«բանտարկել»
NKJV	«կապել»
NRSV, NJB, TEV	«սովորեցնել»
REB	«ուղղել»
LXX, Վուլգատա	«կրթել»
Փեշիտտա, JPSOA	«դաստիարակել»

MT տալիս է «կապել» (BDB 63, KB 75, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: UBS տեքստային նախագիծը, էջ՝ 379, տալիս է “B” գնահատական):

1. կապել - ԴՄՁ
2. սովորեցնել - ԴԸԼ (KB 418 I, տես՝ Սաղմ. 94:10):

Եբրայերեն «կապել» տերմինը մի մարդու իրավաբանական նկարագրություն է, որն ունի իշխանություն մյուսի վրա (այսինքն՝ «կապել» կամ «արձակել»): Այս նշանակությունը համընկնում է Սաղմ. 105:20-22-ի կոնտեքստի հետ: Սա հատկապես ամրապնդում է հ.22ա և հ.22բ-ի միջև գրական կապը:

105:24 Սա արտացոլում է Ելից 1:7,9-ում առկա բազմաթիվ գավակների օրինությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 105:25-36

**25Նրանց սիրտը փոխեց, որպեսզի Իր ժողովրդին ատեն
Ու Իր ծառաների հետ նենգաբար վարվեն:**

**26Իր ծառային՝ Մովսեսին ուղարկեց և Ահարոնին, ում ընտրել էր,
27Ոմանք նրանց մեջ Իր նշաններն արեցին
Ու հրաշքներ՝ Քամի երկրում:**

**28Խավար ուղարկեց ու խավարեցրեց .
Եվ նրանք Նրա խոսքին դեմ չկանգնեցին:**

29Նրանց ջրերը արյան վերածեց ու նրանց ձկներն սպանեց:

**30Նրանց երկիրն առատորեն գորտեր դուրս բերեց,
Մինչև նրանց թագավորների ներքին սենյակները:**

**31Ասաց, ու ամեն տեսակի շնաճանճ
Ու մժեղ նրանց սահմանները մտան:**

**32Անձրևի փոխարեն կարկուտ տվեց նրանց
Ու բոցավառ կրակ՝ նրանց երկրի մեջ:**

**33Նրանց որթատունկներն ու թզենիները ջարդեց
Եվ նրանց սահմաններում եղած ծառերը կտորատեց:**

**34Ասաց, ու եկան մորեխը և թրթուրը՝ անհաշիվ,
35Որ կերան նրանց երկրի միջի ամբողջ խոտն
Ու խժռեցին նրանց արտերի պտուղը:**

**36Նաև նրանց երկրի բոլոր անդրանիկներին՝
Նրանց գորության առաջնեկներին, հարվածեց:**

- 105:25-36** Ուշադրություն դարձրեք ժամանակի տարրը՝
1. Սաղմ. 105:8-15 արտացոլում է Նահապետական շրջանը
 2. Սաղմ. 105:16-24 արտացոլում է Հովսեփի փորձառությունը
 3. Սաղմ. 105:25-36 արտացոլում է Ելիցը

105:25ա «Նրանց սիրտը փոխեց, որպեսզի Իր ժողովրդին ատեն» Ինչպես որ Աստված խստացրեց Փարավոնի սիրտը Մովսեսի խնդրանքների հանդեպ, այնպես էլ խստացրեց Եգիպտոսի ժողովրդին հրեաների հանդեպ:

105:25բ
NASB, NKJV, NRSV, LXX «նենգաբար վարվել»

TEV	«խաբեությանը»
NJB	«երկակիությանը»
REB	«երկակի գործարքով»
Peshitta	«նրբորեն վարվել»
JPSOA	«դավադրել»

MT տալիս է ԲԱՅ (BDB 647, KB 699, *Hithpael* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ): Այս արմատը նշանակում է «խաբեությանը վարվել» (տես՝ Ծննդ. 37:18, Թվոց 25:18, և այստեղ): Հնարավոր է, որ այստեղ նկատի ունի Ելից 1:8-22-ի դեպքերը:

105:26 ՅԱՀՎԵԻ Մովսեսին կանչելու և նրան Եգիպտոս հետ վերադարձնելու պատմությունը արձանագրված է Ելից 3-4-ում:

Ահարոնի անհրաժեշտությունը բացատրվում է Ելից 4:10-17-ում:

1. Ելից 4:10, Մովսեսի արդարացումներ ներկայացնելը
2. Ելից 4:11-12, ՅԱՀՎԵԻ պատասխանը
3. Ելից 4:13, Մովսեսի շարունակ մերժումը
4. Ելից 4:14-16, ՅԱՀՎԵԻ պատասխանը Ահարոնին ուղարկելու, որպեսզի խոսի Մովսեսի փոխարեն

105:27 «Քամի երկրում» Եբրայեցիները գիտակցում էին, որ եգիպտացիները հնում իրենց եղբայրներն են եղել: Քամը նույնպես նշվում է Սաղմ. 78:51, 106:22-ում: Սա խոսում է մարդկության միաբանության մասին: Տես ամբողջական գրառումը Ծննդոց 10-ում:

105:28 «և նրանք Նրա խոսքին դեմ չկանգնեցին» LXX և Փեշիտտան բաց են թողնում ժխտականը: Այս թարգմանություններին հետևում են NRSV և REB տարբերակները: Սակայն, MT տալիս է ժխտականով և UBS տեքստային նախագիծը սա գնահատում է “B”(կասկածելի): Թարգմանչական խնդիրն այն է, թե ովքեր են «նրանք»:

1. MT – Մովսեսը և Ահարոնը
2. LXX – եգիպտացիները, հատկապես՝ Փարավոնը

105:36 Փարավոնը համարվում էր Արևի աստծո՝ *Ռայի* որդին, նույնպես և թագադրված արքայորդին: ՅԱՀՎԵՆ ավելի գերազանց է, քան *Ռան*:



NASB, NKJV, NRSV, NJB, LXX, JPSOA	«նրանց երկրում»
TEV, Peshitta	«Եգիպտոսում»

MT տալիս է «նրանց երկրի» (BDB 75): UBS Տեքստային Նախագիծը տալիս է “C” գնահատական (բավականին կասկածելի):

1. «նրանց երկրում» - օֆֆֆ
2. «Եգիպտոսում» - օֆֆֆֆ

Դրանք երկուսն էլ իմաստ են արտահայտում այս համատեքստում: Հիշեք, պատուհասների ժամանակ Գեսեմի երկիրը ազդեցության չէր ենթարկվում, այլ միայն Եգիպտոսի մնացած հատվածը: Այս դեպքում «նրանց» դերանունը պետք է որ նկատի ունենար ամբողջ Եգիպտոսին, բացառությամբ Գեսեմը (այսինքն՝ Նեղոս Դելտայի մի մասը, որտեղ եբրայեցիները պահում էին իրենց նախիրներն ու հոտերը): Գեսեմն այս ժամանակաշրջանում մոտ էր Եգիպտոսի մայրաքաղաք Ռամզեսին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԼԻՑԻ ՏԱՐԵԹԻՎԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 105:37-45
³⁷Նրանց ոսկով ու արծաթով հանեց
 Ու նրանց ցեղերի մեջ թույլ մարդ չկար:
³⁸Եգիպտոսն ուրախացավ, որ նրանք դուրս եկան,

Քանի որ նրանց ահը իրենց վրա էր ընկած:

³⁹Ցերեկը որպես հովանի ամպ տարածեց,

Իսկ գիշերը կրակ՝ լույս տալու համար:

⁴⁰Ժողովուրդը խնդրեց ու լորամարգիներ բերեց

Ու երկնքի հացով կշտացրեց նրանց:

⁴¹Վեմը բացեց, ու ջրերը դուրս բխեցին,

Գետի պես հոսեցին չոր տեղերում:

⁴²Քանի որ հիշեց Իր սուրբ խոստումը

Եվ Իր Աբրահամ ծառային:

⁴³Իր ժողովրդին ցնծությամբ հանեց

Եվ Իր ընտրյալներին՝ ուրախությամբ:

⁴⁴Եվ հեթանոսների երկրները նրանց տվեց,

Եվ նրանք ժողովուրդների վաստակները ժառանգեցին:

⁴⁵Որպեսզի Իր պատվիրանները պահեն

Ու Իր օրենքները կատարեն:

Տիրոջը փառաբանեցե՛ք:

105:37-43 Այս համարներն արտացոլում են անապատում դեգերելու շրջանը (տես՝ Թվոց 13-36):

105:37 «արծաթով ու ոսկով» Եգիպտացիները իսրայելացիներին շատ ոսկի ու արծաթ տվեցին (տես՝ Ելից 3:21-22, 11:2, 12:35-36): Դա ՅԱՀՎԵԻ կողմից նվաստացնելու լուսաբանման կերպ էր (տես՝ Սաղմ. 105:38):

❖ **«Իր/նրանց ցեղերի մեջ»** Այս արտահայտությունը հնարավոր է կապված է «իրենց գորքերով» (BDB 838) խոսքին, որը գտնվում է Ելից 6:26, 12:51-ում, և Հովսեփիոսի *Հնություններ* 14.6: Դա նշանակում է, երբ իսրայելացիները հեռանում էին Եգիպտոսից իրենց Ելիցի համար, նրանք ճամբարում էին ցեղախմբերով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՐԱՆԻ ՃԱՄԲԱՐԸ

❖ **«թույլ մարդ չկար»** Սա ցույց է տալիս Աստծո հատուկ հրաշագործ հոգաձուլությունը ահելի, ջահելի և հիվանդի հանդեպ (տես՝ 2 Օր. 8:4, 29:5, Նեեմ. 9:21):

105:39 «... ամպ...» Սա ռաբբիների կողմից կոչվում է *«Շեխինա Փառքի Ամպ»* (տես՝ Ելից 13:21-22, 14:19,24, 33:9-10, Սաղմ. 78:14, 99:7): Իսրայելացիների համար այն մի քանի բան կատարեց՝

1. ՅԱՀՎԵԻ անձնական ներկայության սիմվոլն էր (*շեխինա* նշանակում է «բնակվել . . . հետ»)՝
2. այն Իսրայելին բաժանեց Փարավոնի արքայական գորքից (տես՝ Ելից 14:19-20)
3. այն առաջնորդեց Իսրայելին (տես՝ Ելից 13:21-22, Թվոց 9:17-23)
4. այն ծածկեց և պաշտպանեց նրանց շոգից (տես՝ Սաղմ. 105:39)
5. գիշերով լուսավորում էր ճամբարը, անգամ հնարավոր էր լինում, որ Իսրայելը ճամփորդեր գիշերով (տես՝ Ելից 13:21, Նեեմ. 9:12,19)
6. պատճառ էր հանդիսանում, որ ազգերը վախենային Իսրայելից (տես՝ Ելից 23:25, 2 Օր. 2:25, 11:25, Հեսու 2:9):
7. այն ի վերջո անհետացավ, երբ Իսրայելը անցավ Հորդանան գետը (տես՝ Ելից 16:35, Հեսու 5:12), սակայն նորից հայտնվեց Սողոմոնի տաճարի նվիրման ժամանակ (3 Թագավորաց 8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՒԻՆԱ

105:40 «Նրանք խնդրեցին / ժողովուրդը խնդրեց» MT տալիս է «նա խնդրեց»: UBS Տեքստային Նախագիծը գնահատում է “C” (բավականին կասկածելի): Հարցն այն է, թե ում է վերաբերում ԴԵՐԱՆՈՒՆԸ:

1. ժողովրդին որպես մի ամբողջություն
2. նրանց միջից մեկին, որը գործում էր որպես խոսնակ
3. հենց Ինքը ՅԱՀՎԵՆ

❖ **«լորամարզի»** Աստված երկու անգամ լորամարզիների մտով ապահովեց (տես՝ Ելից 16:13-14, և Թվոց 11:31) որպես Իր սիրո և մատակարարման խոստման, հոգատարության նշան:

❖ **«երկնքի հաց»** Սա մանանայի համար մեկ այլ անուն էր (տես՝ Ելից 16):

Բ Օրինաց 8:3-ում մարդիկ այն կոչում են «մանանա» (BDB 577 I, /Ելից 16:31/ Ելից 16:15-ի հարցից՝ «Ի՞նչ է դա» Մովսեսն այն անվանեց «հաց երկնքից», Ելից 16:4): Այն Աստծո կողմից սննդի հատուկ մատակարարում էր անապատում դեգերելու շրջանում: Նկարագրվում է Ելից 16:4, 14-15, 31-ում, Թվոց 11:7-8, սակայն դրա ստույգ բաղադրությունը մեզ հայտնի չէ (BDB ասում է, որ այն հայտնի էր Սինայի Բեդուիններին և որ այն հատուկ ուտելիք քամված հյութ էր, սակայն սա չի համապատասխանում սուրբգրային նկարագրությանը): Աստված ապահովեց նրանց իրենց ամենօրյա բոլոր կարիքները, ոչ թե երկար ժամանակի համար, որպեսզի սովորեն վստահել Իրեն իրենց ամենօրյա հոգսերը: Նա այդպես է վարվում նաև նոր ուխտի հավատացյալների հետ (տես՝ Մատթ. 6:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՆԱՆԱ

105:41 «Նա վեճը բացեց» Ջրի այսպիսի աստվածային մատակարարում մի քանի անգամ կրկնվեց (տես՝ Ելից 17:1-6, Թվոց 20:11, 2 Օրինաց 8:15, Սաղմ. 78:20, 114:8): 1 Կորնթ. 10:4-ում այն դառնում է Մեսիական խորհրդանիշ:

105:42 «քանի որ հիշեց Իր սուրբ խոստումը» Սա նկատի ունի Աստծո սկզբնական ուխտը Աբրահամի հետ (տես՝ Սաղմ. 105:5-6, Ծննդոց 12-15, հատկապես Ծննդ. 15:16):

105:44-45 Այս համարներն արտացոլում են Հետուի առաջնորդությամբ Քանանի նվաճումը:

105:45 «Որպեսզի Իր պատվիրանները պահեն ու Իր օրենքները կատարեն» Հայտնված Խոսքին հնազանդությունը կենսական կարևորության է: Հնազանդությունը հայտնում է սիրտը: Ուխտն ունի երկու կողմ՝

1. ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը և հավատարմությունը (տես՝ 2 Օրինաց 4:39)
2. Իր ժողովրդի հավատքն ու հնազանդությունը (տես՝ 2 Օր. 4:40, Սաղմ. 25:10, 103:18)
3. ՅԱՀՎԵՆ հավատարիմ է (տես՝ 2 Օր. 7:9), ուրեմն Իր հետևորդները նույնպես պետք է հավատարիմ լինեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

❖ **«ՏԻՐՈՉԸ փառաբանեցե՛ք»** Սա բառացի նշանակում է «փառք Յահ-ին» (BDB 237 II, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ *Yah*-ով, BDB 219): Անգեղերենում /հայերենում/ այն տառադարձվել է «ալելույահ»: Այս արտահայտությունը Սաղմոսների գրքի վերջին բաժնում տարածված կրկներգ է (այսինքն՝ Սաղմ. 104:35, 105:45, 106:1,48, 111:1, 112:1, 113:1,9, 116:19, 117:2, 135:1,21, 146:1,10, 147:1, 148:1,14, 149:1,9, 150:1,6): Ի՞նչ տեղին է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Աստվածաշունչը մեզ քաջալերում, որ մասնակցենք հանրային, հավաքական պաշտամունքին:
2. Որո՞նք են միաստվածության ենթատեքստերը:
3. Արդյո՞ք Աստված սով է ուղարկում (Սաղմ. 105:16):
4. Ինչո՞ւ են այդքան կարևոր Իսրայելի հանդեպ Աստծո ցուցաբերած սիրո և փրկության գործերը:
5. Աստծո ուխտերը պայմանական են, թե՞ անվերապահ:
6. Ինչո՞ւ է այս Սաղմոսը կոչվում «փրկության պատմություն»: